

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիս 2018թ. թիվ 15

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետը, 2-րդ մասի 1-ին կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 5 որոշմամբ հաստատված Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմման և գործունեության կարգի 10.3-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 9 որոշմամբ հաստատված Հատուցման գումարների վճարման կարգը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի 22.06.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 21.06.2018թ. ստացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 21.06.2018թ. ստացված տեղեկատվության հիման վրա զրհված ժամկետային պարտադիր զինծառայող, կրտսեր սերժանտ Գագիկ Առուշի Մեսրոպյանի շահառու համարել *****:
2. Օրենքով սահմանված հատուցման գումարը՝ 58.000.000 ՀՀ դրամը, վճարել սույն որոշման 1-ին կետում նշված շահառուին՝ *****՝ վճարելով 10.000.000 ՀՀ դրամը միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200.000 ՀՀ դրամի չափով 20 տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հանձնաժողովի նախագահ՝

Վարուժան Ավետիքյան